թեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ» (էջ 300–301)։

Իպն Մասկավայ կը վկայէ այս մասին թէ 238 թուին՝ Բուղան «յաղթեց... (Թիֆլիսի)...։ Դորանից յետոյ Բուղան յարձակեցաւ Իսայ Իպն Իւսուֆի՝ Ստեփաննոսի քրոջ որդու վերայ եւ ճակատեցաւ նորա հետ Փայտակարան քաղաքում. Իսայ ամրացաւ Կրիչ ամրոցում, Բուղան գրաւեց բերդը, բռնեց նորան եւ տարաւ՝ նորա որդու եւ Սմբատ որդի Աշոտի՝ Աղուանից իշխանի, եւս Ատրներսեհ որդի Իսահակի հետ միասին»(17)։ Իպն Մասկավայի վկայութեան համաձայն՝ Աղուանից արշաւանքը տեղի կ'ունենայ 238 հիճրէթի կամ մեր 852 թուականէն վերջ։ Արաբացի ժամանակագիրը Քիշ լեռը ունի իբր Կրիշ ամրոց։ Սակայն սխալ է թէ Բուղան գրաւեց բերդը, բռնեց նորան, այսինքն Ապումուսէն։ Արծրունիի մօտ մանրամասնութեամբ գրուած տեսանք որ Ապումուսէ չպարտուեցաւ Բուղայէն, եւ խաղաղութեամբ միայն կարելի եղաւ զայն տանիլ Պաղտատի խալիֆային դուռը։ Իպն Մասկավայի յիշած Ատրներսեհը Սահլի որդին էր, որուն Իսահակ կոչումը կու տայ ապրաբ պատմիչը եւ Սմբատ որդի Աշոտի Աղուանից իշխան կը կոչէ։ Այս վկայութիւնն է որ սխալ առաջնորդած է Բար Հեբրայուսը, որ, ինչպէս տեսանք Սահլի կենսագրութեան ընթացքին, Մահադի–Բարակը բռնել կու տայ Իսահակ իպն Ա(շ)ոտի։

Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի կը գրէ, որ «իշխանն Աղուանից Եսայի (Ապումուսէ) նենգապատիր լեալ առ ի նմանէ (Բուղայէ), ըմբռնի ի ձեռս նորա հանդերձ համազգօք իւրովք. ընդ նմին եւս այլ տեարք եւ իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա, ոչ սակաւ ինչ արեան ճապաղիս հեղեալ եւս յայնմ աշխարհին»(18)։ Կը հակասէ կաթողիկոսը Արծրունիի տրուած մանրամասն վկայութեան։ Արծրունին է որ կ'ընդունիմ։ Ասողիկ ալ գրեթէ նոյն տպաւորութիւնը կ'ուզէ տալ հակիրճ տողերով խօսելով։ Բուղայ «կալաւ... եւ զիշխանն Մաչենոյ Ատրներսեհ, եւ զԵսայի Աղուանից իշխանն...։ Զսոսա զամենեսեան եւ զայլս բազումս եւս երկաթի կապանօք խաղացոյց ի Սամարայ. եւ զեբեաց զաշխարհս ամենայն»(19)։ Գոնէ Ապումուսէ Եսայիի համար ճիշտ չէ երկաթի կապանօք տարուիլը։

Գերեալ Հայ իշխաններուն հաւատուրացութիւն կ'առաջարկուի։ Նեղութեանց կ'ենթարկուին։ Սակայն վերջապէս «իշխանքն Հայոց, որք գերեցան ի Բուղայէ՝ յետ ամաց ինչ դարձան յիւրաքանչիւր աշխարհս իւր, միայն սպարապետն Սմբատ եւ Ստեփանոս Կոնն, որք վասն Քրիստոսի խոստովանութեանն կատարեցան ի Սամարայ»(20)։

Յովհաննէս կաթողիկոս կը մանրամասնէ որ կալանաւորեալները խալիֆային արքունիքը տարուելէ վերջ կը բանտարկուին։ «Իսկ ապա յետ ոչ բազում ինչ աւուրց հարցափորձ ի վերայ հասարակաց կապելոցն տերանց եւ իշխանացն Հայոց եւ Աղուանից ածէին, զի կամ դարձցին յանօրէն օրէնս նոցա, ուրացեալք զՔրիստոս աստուածպաշտութիւնն, եւ այնպէս բազում պարգեւս եւ պատիւս ի նոցանէ առնուցուն, եւ յուղարկեսցին ի հայրենի աշխարհն եւ ի տունս իւրեանց. եւ կամ սաստիկ խոշտանգանօք եւ չարչարանօք եւ անհնարին մահու հատանիցեն զյոյս կենաց նոցա։ Եւ վասն զի այսպէս զրոհմունս կատանաց ի վերայ նոցա սաստիկ զարհուրմամբք օր ըստ օրէ զարթուցանէին, ժամանակ ինչ յերկարեալ զնեղութիւն անձկութեանն, ոմանք ի նոցանէ հաւանեալք բանից արքունի, դարձան... յաստուածածանօթութիւն նոցա, եւ ո–

(17) Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին։ Բագրատ Խալաթեանց, էջ 78։

(18) 1867, էջ 162։

(19) 1885, էջ 107։

(20) Անդ, էջ 110։